


ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

Պողկարիոյ համար
 արեկակ 12 ֆր.
 վեցամսեայ 7 «
 Արսասահմանի
 համար արեկակ 15 «
 վեցամսեայ 8 «
 Անկերիկայի համար
 արեկակ 3 ֆր.
 վեցամսեայ 1.50 »

Մացուցման տողը ա-
 նաջին երեսին համար
 40 սանթիմ իսկ վերջին
 երեսին համար 20 սան-
 թիմ է. երեքին սանթի
 անգամներու համար
 20 Օ/Օ զեղը կըլայ:

Վառնայի համար 4' n
 ֆե 40 սանթիմ է



ՄԱՐԿԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒ ՎԱՐՆԱ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ
 դրկել խախազ ուրախ
 հասցեին

Редакция на вѣстникъ
 „Шаржумъ“
 Варна

Redaction du journal
 „Charjourn“
 (Bulgarie) Varna

Պողկարիոյ համար
 անթի 15 ՍԱՆԹԻՄ
 Արսասահմանի համար
 անթի 20 ՍԱՆԹԻՄ

Գրուրթնիք եւ չեն
 տուիր

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵԿԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆՆԻԻ ՎՃԱՐԷ

Ա Չ Դ

Չը վճարող բաժանորդ-
 ներուն և գործակալներուն

Կը խնդրենք շտապել ձեր հա-
 շիւնները կարգադրել հին և նոր:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Բարիք. Մ. Յուլակ. — Ձեր նա-
 մակը ընդունած ենք. ձեր զըր-
 կելիք բանասիրականը երբ յար-
 մար ըլլայ կը տպագրենք. Ո՞ր
 համարներն է որ չէք ընդունած:

— Եգիպտոսի և Ամերիկայի
 քանի մը բաժանորդներուն, ինչ
 պէս և Ֆիլիպէի քահանային. —
 Մենք թերթերը շարունակ կը
 շրկենք. ձեր քաղաքներու մէջ
 է որ կը կորսուին. ծուռ մուռ
 միջոցներով աշխատողներ կան,
 որ «Շարժում»ը անկանոն հասնի
 իրենց տէրերուն: Այդ ալ փա-
 սելու ձեռքն է:

— Ֆիլիպէ. Ոսկի. — Ձեր բուն
 ստորագրութիւնը յօդուածին
 տակ կը պակսի. գիրն ալ անձա-
 նօթ է. բարեհաճեցէք ձեր ստո-
 րագրութիւնով շրկել ձեր յօդ-
 ւածները:

Խմբագրութիւն

ԴԱՆՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
 Ժ Ո Ղ Ո Վ Ն Ե Ր Ը

— () —

Մենք նախ այստեղ բերում ենք
 Դաննակցական կազմակերպական անձ
 նաւորումը (!!!) 1897 ին ֆրիս
 տափորի մեզ ուղղած նամակից մի
 կտոր, որով նա պատասխանում է
 զանազան ընկերներից եղած դիտո-
 թիւներին մի քանի կարգադրու-
 թիւներով մասին, այդ կտորը շատ
 յստակօրէն պարզում է թէ սպակեղ-
 րոն դաննակցութեան գերագոյն մար-
 մինը՝ ընդհանուր ժողովը որչափ նը-
 շանակութիւն ունի ֆրիստափորի և
 իրեն մարդկանց աչքում:

Վերջը ցանկով նամակ պարտք
 եմ համարում յայտնել որ մենք
 իսկապէս մեր առաջարկութիւն-
 ներով կատարում ենք մեր կազ-
 մակերպութեան բազմամարդ մի
 ժողովի վճիռը. — Ժ ո Ղ Ո Վ ի ո.

ը ը ն ո յ ն ի ս կ ի թ ն ի ր ա-
 լ ու ն ք հ ա մ ա ր ե ց ը ն Գ-
 հ ա ն ու թ ո ղ ղ ի ա ն ու ն ը
 վ ե ը ց ն ե լ ա: (Ստորագրումը
 մեր կողմից է):

Այստեղից պարզ երևում է որ
 Դաննակցականներից բազմացած մի
 մասնաւոր ժողով կարող էր ինքիւնքը
 ընդհանուր ժողով համարել և կա-
 բուրը, ճակատագրական անօրինու-
 թիւներ անել:

Յեղափոխական մարմին ընդհանուր
 ժողովի այս պարզ ընտանեկան ձեւին
 վերածվելը, նոյն իրեն ֆրիստափորի
 գրչով արտայայտված, բնական էր որ
 իմուշագրութիւնը պրակտիկապէս տար
 թէ այս էլ նոյն կեդրոնացումն է, ո-
 րից Դաննակցութիւնը իբր թէ խու-
 սափում է այդ ձեւը վիսասակարգը
 ներսը:

Ու այդ տողերը կարգաւորեց յետոյ
 վճիռի պայքարել այդ ուղղութեան
 դէմ:

1898 թուին իբր Բալթանան շըր-
 ջանի պատգամաւոր կովկաս հասնե-
 լով նկատեցի որ անգին քանակու-
 թեամբ մարդիկ են հաւաքվել գոր-
 ժիւնների տիրոջներով, որոնց մի մասը
 իրօք մեծ արժանիքով մարդիկ էին
 բայց շատ էին և անպէտքները, գո-
 նէ մի ընդհանուր ժողովի համար,
 ուր յեղափոխական ամենաբարձր հար-
 ցերն են ձեռնվում, եւ մի քիչ ուշա-
 ցել էի. հէնց այդ օրը առաջին ժողո-
 վը պէտք է տեղի ունենար, ժամա-
 նակ չըկար խորհրդակցելու պատգա-
 մաւորների հետ. միայն մի երկու
 հոգիով դիմեցինք բիւրօյի անգամնե-
 րից մէկին խնդրելով նախապէս պատ-
 գամաւորների ժողով կազմելը և
 այնտեղ որչափ որ գործիչներին
 արտօնել մասնակցելու ժողովին: Մեզ
 այդ խոստացվեց, Բայց յան-
 կարծ երկուսին յայտնեցին որ ֆրիս-
 տափորը արդէն ամենքին էլ հրաւի-
 րել է և հիմա լաւ չի լինի որ այդ
 ձեւը տանք. Այդ ի հարկէ ինձ վրա
 վատ ազդեց. մէկ մարդը ապակեղրոն
 կազմակերպութեան մէջ խորակում
 էր պատգամաւորական ժողովի իրա-
 ւունքը և կրկին գործը վերածվում
 ընտանեկան հաւաքումի: Նոյն գի-
 շերք եւ բողբոջի այդ մեծ և վատն-
 գաւոր անկանոնութեան դէմ ու հը-
 րաժարվեցի ժողովին մասնակցել,
 միանգամայն պահանջելով որ արձա-
 նագրվի իմ այդ բողբոջը և հեռացայ
 ժողովից:

Երկրորդ օրը մի քանի ընկերներ
 ինձ համոզում են որ եղածը եղած է
 և հեռանալու աւելի վատ է. գործի
 շահը պահանջում է շարունակել ժո-
 ղովը. պայքարել և այդ տեսակ մի
 հաւաքումի գործած սխալների քա-
 նակը պակսեցնել:

Միւս օրը ներկայանում եմ ժողո-
 վին, յայտնում իմ համաձայնու-
 թիւնը մասնակցելու հետեւեալ պայ-
 մանով. որ ես ոչ թեկնածու կը լի-
 նեմ ունեմ մարմին և ոչ էլ ունեմ
 մէկին ձայն կրտամ: Ձայնով կը
 մասնակցեմ միայն զանազան հարցերի
 եւ խնդիրների որոշման:

Նկատելով որ ընտանեկան ժողովը
 անգին քանակութեամբ թեկնածու
 ներ ունի երկու բիւրօների համար,
 իսկ երկիր զնացող շատ քիչ մի քա-
 նի ընկերով իսկոյն գնում ենք յե-
 ղափոխական ամենաէական ցէնզի
 խնդիրը: Այսինքն, Դաննակցութեան
 ամեն մի կարեւոր մարմին անգամ
 պարտաւոր է նախապէս խոստանալ
 երկիր մտնել հարկը ստիպած պայ-
 քով, ընկերների պահանջով:

Այդ սկզբունքը գնելով մենք ու-
 զիցինք վերջ տալ սիրող յեղափոխա-
 կանների արտօնակներին և կազմա-
 կերպութեան ղեկը դնել իրական յե-
 ղափոխականների ձեռքը:

Այդ շահեղ նորոգումն է. թէ կէս
 ձայնի, որ պատկանում էր Միքա-
 յէլեանի քրոջ որդուն. մի ուսանող,
 ու բարոյական ոչ մի իրաւունք ու-
 նեցող այդպիսի յեղափոխական ժո-
 ղովի մասնակցելու: Քրոջ գաւազը
 փրկեց քեռու ուղղութիւնը: Դրա
 վրա աւելցաւ ֆրիստափորեանների
 սպանակիքը որ եթէ իրենց թեկնա-
 ծուները չընտրվին Արեւմտեան բիւ-
 րօյի համար, Բաքուն փող չիտայ և
 Դաննակցութիւնը կը քանդվի:

Էլ ճար չը մնաց. ընդդիմադիր
 կուսակցութիւնը իր բոլոր ճիգերը
 թափեց վերցնել ցուցական գրու-
 թիւնը և մտցնել ուժերի կեդրոնա-
 ցումը և յաւոյնք. վերջը ամեն ճիգ
 թափեց կովկասեան ձայնների թիւը
 պակսեցնել այսպէս ժողովներում և
 գործիչներ հրաւիրելու իրաւունքը
 տալ երկու բիւրօներին հետեւ տնկ-
 րից իսկ ընդհանուր ժողովին աւե-
 ղում գտնվածներին: Այդ ժողովում
 գործիչների ձայնի թիւը գրեթէ հա-
 ւասարվում էր պատգամաւորների
 թիւին: Ստուգեցէք արձանագրու-
 թիւնը:

Վերջապէս ժողովը ցրվեց. բիւրօ-
 ները կազմակերպելով, երկիր մի խո-
 շոր մասի համար գործիչներ չը դառնե-
 լով, իսկ մի մասի համար այնպիսի
 մարդիկ ընտրելով, որոնք երբէք
 չը գնացին իրենց տեղերը: Ու հինգ
 վեց տարի շարունակ մինչեւ վերջին
 ընդհանուր ժողովը երկիր շատ կա-

րեւոր մասերը մնացին առանց գոր-
 ժիչների. եղածներն էլ չը ստացան
 այն նիւթական ուժը, որ նրանց
 անհրաժեշտ պէտքերին պէտք է գո-
 հացում տար:

Ահա այս ժողովից յետոյ էր որ
 Բուլգարիա վերագտնուով, ես հրա-
 ժարական տւի, վերջը կրկին եւն-
 թարկվելով ընկերների բարոյական
 ճշման բնորոնեցի ներկայացուցչա-
 կան պաշտօն, ու մի քանի ամսից
 կրկին վերջնապէս հրաժարվեցի,
 օգտվելով յայտնովի անձնական
 պատճառներից:

Տարիները անցան. նոր ընդհա-
 նուր ժողով գումարի մտածող չը
 կար: Երկրի շատ մասերը անտէր ան-
 տիրական էին մնացել: Գործիչները մի
 քանի տեղերից փող միայն ապրելու
 համար փող էին ուզում: Նրաքցից
 մէկը գրում էր Արեւելեան բիւրօյին
 «Մենք աւելի կը դառնանք տե-
 ղացուց կացութիւնը, անոնց ոչ մէկ
 օգնութիւն չը տալով էանդերն, ի-
 րենց չունեցած հացն ալ կը բաժ-
 նենք գոնէ քանի մը տուրի, ատր-
 ճանակ մը, եւ նամակ մը շրկեցէք»:

1902ին երկու ամսահայ
 լուրջ ուսանողներ ուղղում են
 երկիր անցնել, ու Արեւելեան բիւ-
 րօյից պահանջում ապրուստի ապա-
 հովութիւն, կանոնաւոր նամակա-
 գրութիւն, բիւրօն չէ խոստանում.
 և գործիչները դուր անողւտ նահա-
 տակ, եւ ժողովրդի գլխին նոր դժ-
 բախտութիւններ չաւելցնելու պատ-
 ճառ չը լինելու համար ետ են դառ-
 նում իրենց տեղերը:

Ահա այս գրութեան մէջ արտա-
 սանձանեան ընկերները զանազան
 տեղերից Արեւմտեան բիւրօյին ստի-
 պում են շուտով ընդհանուր ժողով
 գումարել. այս խոստանալով, ան-
 կերպարան կացութեան վերջ տալու
 համար: Ինչպէս անցեալ անգամ յի-
 շեցի. այդ յաջողվեց սակայն աւե-
 լորդ չեմ համարում այստեղ մէջտեղ
 թերել արտասանեան ընկերներից
 մէկի կարծիքը պարզ ժողովի մասին:

Պինչպէս կերեւեալ մարդիկ ա-
 մեն ջանք պիտի թափեն մեր
 բարենորոգչական ծրագիրները ի
 դերն հանելու: Ընդհանուր ժողով
 մը այդքան ուշ և ամիսներ վերջ
 կովկասի մէջ ուրիշ արդիւնք չի
 կրնար ունենալ, բայց եթէ ներ-
 կայ տխուր սխալներն վաւերա-
 ցումը ու ներքաղաքումը (Այս ընկերը սխալվել էր միայն մի
 կէտում. ժողովը կովկասում չը տեղի
 ունեցաւ):

«Պէտք է մինչեւ վերջ բուռն կերպով հակառակել ընդհանուր ժողովի այդ ձեռով գումարելուն, նաև եթէ մեր բողոքները անլսելի մնացին անվաւեր համարել այդ գումարելիք ժողովը և չը մասնակցել»:

Վերջապէս տեղի է ունենում ժողովը: Կողմակերպութիւնը հարուստ է եւ բաւական հարուստ դրամով սպանութիւններ շնորհիւ: Սակայն սխալ է մը նոյնն է: Արտասահմանեան գործունէութիւնը ահագին սեղ է բռնում. արտասահմանեան թիկնածուների թիւը աւելի շատ է մօտ երկու հարիւր հազարի բնութեւէ ուզվում նը շանակվել: Ինչ որ մի մեծ գրքի, Անգլիայում, Գերմանիայում, Իտալիայում թերթեր հրատարակելու եւ պրօպագանդիստներ պահելու համար: Գործեր են ստեղծվում գրագէտների, բանաստեղծների, քարոզիչների համար բայց շնորհիւ զիմադրութեան կրճատվում:

Պայքարը տաք է. շատ տաք. օրեր են վատնվում արտասահմանեան թեկնածուների համար: Վերջապէս ճարը հատած հանգուցեալ Քրիստափորը ոտքերը գետնին խփելով, սպառնում է դրամ չը տալ եթէ իր Արեւմտեան Եւրոպի թեկնածուները չանցնեն: Մէկ թեկնածու երեք անգամ քէտակվելուց յետոյ այդ դրամը չը տալու սպառնալիքի ազդեցութեան տակ է յաջողում ընտրվել:

Այս ժողովում էլ դրվում է, ընտրութիւններին յառաջ յեղափոխական զոհողութեան ցէնզի էական սկզբունքը՝ նա անցնում է: Բայց Քրիստափորը իր Եւրոպայում ապրող թեկնածուներին փրկելու համար կրկին ճարպիկութիւնն է ունենում ձայներից երկուսը ետ համոզել և միանգամ քէտակված որոշումը լուծել տալ:

Կատարեալ ապակեկտրոնացում... Վերջապէս այստեղ աւելորդ չենք համարում մէջտեղ բերել հանգուցեալ Քրիստափորի ինձ ուղղած մէկ հին նամակից մի կտոր, որով պարզվում է թէ նա ինչ տեսակ էր մտածում ուրիշ գործիչներին երկիր պնայած ժամանակ և ինչ կերպ մտածեց երբ վերջին ընդհանուր ժողովում ինքն էլ որոշեց դնալ:

Սիրելի Արվախ,
«Այս օրերս ստացանք իդիմոց վեց ընկերների Մարի գրած նամակը և նոցա ձեզ գրած երկու նամակները պատճէնները. քեզ յայտնի է այդ նամակների պահանջը: Մենք արդէն պատասխանել ենք իրենց, որ ոչ իրենց ուղղած չափ գումար կարող ենք շուտով իրենց հասցնել և ոչ էլ սկզբունքով կարող ենք համաձայնվել այն կապալական սխալմէն, որով առաջ քան տեղներիցը շարժվելը դրամական պայմաններ են առաջարկվում...»

Այս վերջին ընդհանուր ժողովում հակառակ այս սկզբունքի եւ մտածման ձեւին ամեն ինչ կապալով տըրվեց և խոշոր խոշոր գումարներով:

Այս անգամ էլ ձայների մէջ օյիններ կային: Ձայների իրաւունքը ստուգվեց ժողովից վերջը: Ես սկիզբներին բացակայ էի: Պարզեց որ մէկը եկել է գործիչ Ռոստոմի հրամանով: Ժողովը որոշեց յանդիմանութիւն արձանագրել Ռոստոմի հասցէին: չը գրտեմ եղաւ թէ ո՞չ: Երկրորդը ոչ մէկի հրամանով, այլ իր. նա պատասխանեց. «Իմացայ ժողով կայ, նաև նստեցայ եւ եկայ»: Երրորդը երկրի մի գործիչը թիկնապահ էր: Անա այդ երեք աւելորդ ձայներով, կրկին ընդդիմադիր կուսակցութիւնը պարտվեց, ու հին ուղղութիւնը յաղթանակեց, արտասահմանը օժտելով գործիչներով, իսկ երկրի կարեւոր

մասը պարապ թողնելով նրանցից:
Այս անգամ ժողովը մի նորութիւն ունեցաւ. Դաշնակցութեան հիմնադիր Քրիստափորը, ինչն էլ վերջապէս որոշեց երկիր մտնել, իր տասնհինգ տարվան արտասահմանեան յեղափոխական գործունէութիւնից յետոյ, բայց իրօք շատ զժառիտ դատեցից:

Երիտասարդութիւնը խալառ հեռացած է երկրէն, ընտանեաց ու զաւակաց տէր մարդիկ, որոնք 10-15-20 տարի է որ հեռացած են իրենց հայրենիքէն, (աննշան բացառութեամբ մը) միայն, շատեր լքած են իրենց ընտանիքը. այս երկար տարիներու ժամանակամիջոցին մէջ նիւթական ու եւ է օգնութիւն չընելէ գատ, նամակ մը անգամ գրած չեն այդ խեղճ արարածներուն ու երբ կին մը երկար տարիներ այս միեւնոյն դաժան ու մահացեալ պայմաններու ենթակայ է առանց իւր քարսիրա ու անարժան ամուսինէն աննշան օղնութիւն մը տեսնելու. ի՞նչ պիտ ընէ, բնականաբար անբարոյականութեան ճամբան պիտի ձեռք առնէ. ապրեցունելու համար իրեն սրտիհատոր զաւակները, որոնք իրեն փէշերէն բռնած, ամայրիկ, անօթի եւ, մայրիկ, հաց կուզեմս: Աւ ես կը հարցունեմ Ձեզի պըն. խմբագիր. կին մը, երբ այս պարագաներուն տակ անբարոյականութեան կը դիմէ, մեղադրելի է, կին մը որ իւր համեստութեամբ, օտարազգիներու յարգանքին արժանացած է, ու զարեթէ իվեր սեր աւանդապահը եղած է:

Ի՞նչ լռեան բոլոր այն հրէշ ու անհոգի ամուսինները, որ իրենց զաւաճան լուծութեամբ զարեթէ իվեր կարգուած հոյ կեոյ պատիւը արտասարկու պատճառ դարձան, ամբ եւ նախախնայ իրենց երեսին:

Թիւրքը մեզ կապանեւ, որովհետեւ մեր թշնամին է չըբերող մեզ կը կողոպտէ, որովհետեւ վայրենի է. հապ սա հայ անուն կրող թրքաօրի պատները, ո՞չ աստից բրածը անտանելի է, աստեք կործան էլուզան ամբողջացունելու ու ծաղկեցունելու թիւրքին ու քիւրտին ըրած խայտառակութիւնները, ասանց մտաբերելու թէ իրենք ալ հայ են եւ այդ ոտնակախուսած թշուառներուն ազդայններն են: Թիւրքը հայ գիւղացին մահացունելու վիճակին հասուց. այսօր կարգը իրենց եկած է, (ինչպէս կառավարութիւնը վերջերս սկսած է այդ աղաներու օձիքն ալ վեր առնել...) յաջողիւ պատահու-

Ա. ԱՄՅԻՏԵԱՏՐՈՎ
ՎԻԿՏՐՈՒ Ա ՊԱՎԼՈՎԻԱ
— 0 —
(Տօնախմբութիւն)
— 0 —
(Գրագիտի յիշողութիւններինց, Ամրան արկածներ բաւական տարտիմակ հասարակութեան մեջ)
— 0 —
(Թարգմ. ուսուցիչինց) 44
Թ.
(Շար. նախորդ քիւրեմ)
— Ուզում էք բռնի վերցնել, շարունակեց Արինան. հէնց որ մի կին ձեզ սիրելի եղաւ դուք իսկոյն երեւակայում էք միայն դուք լուսն էք նրա համար, եւ նրա ամբողջ երջանկութիւնը կեանքում պէտք է լինի անպատճառ միայն ձեզ սիրելը: Ու դեռ համոզված չը լինելով որ դուք էլ հաճելի էք ձեր սիրած կնոջ, հաստատ որոշում էք նա իմն է, եւ եթէ նա սիրէ է՞ ձեզ ուրիշներին ճամբա

տայ, նա ձեր կարծիքով մաքուր է. իսկ եթէ ձեզ չէ սիրում, այլ ուրիշին եւ ճամբա ձեզ է դնում, դուք սկսում էք այդ կնոյը հայնոյն, ստորին, անամթ ճոզակելու ջարմանալին է. ճշմարիտ:
Ու այսպէս, պարոն, եղբակացվում է որ ամեն մի տղամարդ ինքզինքն է աշխարհի ամենալաւ տղամարդը կարծում. իսկ մնացածները բոլորն էլ անմաքուր են: Լաւ է որ դուք էք ձեր գինը նշանակում. չընորհակալ ենք դրա համար:
Արինան, մինչեւ գետին ինձ գրուի խոնարհեցրեց ամենայն լրջութեամբ, կարծես աշխարհի բոլոր այդ մարդկանց պատասխանատուութիւնը իմ մէջ կնդրունացնելով, եւ շարունակեց.
— ԱՓանասիւր իրօք անպիտան, արբեցող, անասուն է. ի հարկէ նա չէ որ պէտք է սիրանար Վիկտորիային. բայց աղջիկը յիմարութեամբ ընկել է, ինքն էլ է այդ ըմբռնում եւ հասկանում. առանց այդ օյինների էլ Ֆենիչկան թագնում ենք, եւ մեր մեղքը համար ապաշխարում: Բայց մեղքը գործվել է. շտկել անկարելի է:
Արինան երկար ու բարակ խօսելով

տղամարդկանց էզօրովը դատապիտեւ լով, նրանց ազատութիւնը զանազան կիներին հետ յարաբերութիւն ու նենալու մէջ ու միշտ անմաքուր տխրոսից ազատ մնալը մատնանշելով, ցատկեց պատուհանից եւ սենեակիցս հեռացաւ սանելով.
— Վիկտորիա գնում է. գնում մի քիչ յանդիմանեմ. հա, ահա թէ ինչի համար էի եկել ձեզ մօտ. սիրելի պարոնս, Բուրուը մօտ է ձեր սենեակը եւ այս տոմսակը թողել, նամակը աղտոտ եւ բաց էր:
— Միթէ Բուրուը նամակը այս-ձեռով էր թողել, էարցրի ես. Արինան ամենալիքը ստի կոշով նայեց աչքերիս եւ պատասխանեց.
— Հէնց այդպէս:
Առարկելու բան չէր մնում. Բայց ես յիշեցի որ Արինան կարգալ չը գիտէր, ու այս տեսակ պարագային այդ նամակը ուրիշին չէր տալ կարգալու: Նա պատմում է որ Վանիան ոչինչ գիտէ այդ մասին, հապ ով է բացել նամակը, որին այդպէս լաւ հատում է Արինան:
Պատուհանից նկատեցի թէ ինչպէս Արինան մօտեցաւ Վիկտորիային եւ բարկութեամբ ինչ որ ասեց, Վիկտորիան կանգնեց, թագազուրկ թա-

գուհու մտայ մի նայածք նեոսեց ու ինչ որ սակելով ուղղվեց դէպի տուն:
Հետեւից նկատվեց որ Արինան կըրկին բարկութիւնից կապտեց:
— Լաւ, լաւ, լավում էր Արինայի ձայնը—դեռ էլի խելքդ զլուխդ չէ եկել. լաւ, ես կըսպասեմ, կը համբերեմ, իսկ դու քու բաժինը կատանաս ժամանակին. հանգիստ կաց, կատանաս:
Բուրուըի տոմսակը կարճ եւ հետեւեալն էր.
Ներեցեք որ մեկնում եմ, ասանց ձեր ձեռքը սեղմելու. սակայն թերեւս հիմա, դուք չուզեմայիք սեղմել իմ ձեռքը. ինձ վրա շատ վատ մի մտածեցէք. ես ձեզ կապացուցեմ. այս օրերս, ձեր թղլտուուութեամբ մանրամասնօրէն կը գրեմ Ձեզ յարգող եւ անձնուէր Բուրուը:
— Գաղտնիք դուրս չի տալ, մտածեցի ես եւ ճամբա ընկայ Ափանասիւրին ազատելու իր ցուրտ բանտից:
Իմ փորձը Վիկտորիայի աջակցութեամբ կտորել Արինայի հեղինակութիւնը անյաջող ելաւ. Վիկտորիան գոցվել էր իր սենեակում, ու իմ բախումին պատասխան չը տվեց: Այլեւս պէ՞ղքը աւելորդ համարեցի:

թիւն պիտ ունենամ խօսելու այդ հայ ազաներու սարքած լինելու և զրգ ունիլի արարքներուն մասին:

Մնամ խորին յարգանքով ՍԳՍՒՈՐ

ՆԱՄԱԿ ԵՐԿՐԷՆ



Սիրելի հորեղբոր որդիս

Շատ ժամանակ կը լինի որ քեզ նամակ գրած չունեմ, արդէն գրելիք ալ չունէի, որովհետեւ մկր ամենօրեայ վիճակը այնչափ անասնելի դարձած է որ, մոտցած ենք ամէն բան եւ վաղուան օրը մտածելն ուրիշ բան մը անկարող ենք ընել: Անցեալ օրեր սակայն այնպիսի մեծ հարուածի մը եկանք որ բոլորովին ցնցեց զիս, եւ որովհետեւ չունիմ մարդ որի զիմեմ, գաւս յայտնելու, ստիպուեցայ գրել քեզ:

Ինչպէս գիտես, գալիս ի վեր, առ եւ տուրի ետեւէ ինկած էի. անցեալ օր մայիս 20ին գրեցի, մտակայ գիւղերէն մի քանի քրտեր գրեցի անց մտնելով իսկուհիս կը կողպուեմ, սպանելով 250 ոսկի դրամ եւ 2,0 ոսկիի ապրանք ընդառնելու 450 ոսկի, որ ամբողջ հարստութիւնս էր:

Շուտով դիմեցի կառավարութեան որ թէպէտեւ ձեռքադրեց աւազակները, ոսկայն հարցաքննութեան ժամանակ, զիւղի մարդիկ, վախնալով արիւնհարքու քրտի վրիժառութենէն, փոխանակ եղելով ինչը վրկայելու, հակառակ վկայութիւն տուին, որով դատարանը ազատ աւձակեց քրտերը, որոնք սկսեցին զիս ծաղրել:

Այլ կրնաս երեւակայել վիճակիս, ընտանիքով եւ զաւակներով մնացած ենք անօթի ծարաւ, կարօտ աւուրհացի. չենք գիտեր թէ ուր պիտի յանգի մեր այս անտանելի վիճակը ուրիշ ճար չունիմ այլ դիմել դարձեալ պանդխտութեան, չէ մի որ արդէն այս գուժարն ալ Ամերիկայի մէջ տասը տարուան տածանելի աշխատութեան արդիւնքն էր, որ վր-

ճացաւ մի օրուան մէջ:

Անցեալ օր մայիս 20ի գրեցի քու տեր կը բռնեն Սարգսողու Նշան կը տանին լեռ եւ 32 ոսկի դրամը խելէ եւ լաւ մը տփելէ վերջ, մահամերձ վիճակի մէջ կը ձգեն կը հնոսանան. այսպիսի դեպքեր ատօրեայ են եւ թէ ժողովուրդը դեռ չի սթափի եւ հոգով մարմնով չի փարի ազատութեան դրօշին, եւ չի դիմէ ինքնապաշտպանութեան, քիչ ժամանակէն պիտի բոլորովին սնչանանք. գոնէ զուք որ պատ երկրի մէջ կայրիք աշխատեցէք ընել այն ինչ որ մենք մեր ազիտութեան պատճառով անկարող կը գտնուինք ընելու:

Կաղաչեմ նամակս առնելուդ, եթէ կրնաս ինձ մի քանի ոսկի դրամ զրկէ որ մինչ ինքզինքիս գալը. անօթութենէ մտնելու վտանգէ վերջ լինիք:

Դժբաղդ հորեղբոր որդիդ

ՈՒՍԻՈՅ ՆԵՐՔԻՆ
ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Իտալական «Թրիպուս» թերթի թղթակիցը պ. Բարտօ հեռագրով կը գրէ Ռուսիոյ ներքին կացութեան մասին:

«Ռուսիոյ ելեւմտեքի վիճակը մասին գրածս յօդուածին աւելցուցած էի. հաշտութիւն կը ընդունուին ամենամեծէն կարեւորն է Ռուսիոյ ներքին կացութիւնը»

«Այդ խօսքերը որ արտայայտած էի աչքերուս առջեւ տեղի ունեցած անցքերուն տպաւորութեանը տակ, գրեթէ մարգարեութեան նշանակութիւն ունեցան. Լօտզ, Օտէսա, Նիքօլա եւ Սեվասթոպոլ կազմեցին դժբախտութիւններու անվերջ շղթան, որը ուրս յիշատակութիւն անունը կը կրէ»

«Երբ երկիր մը կալեկոծուի անընդհատ և այդպիսի սարսափելի շղթագումներով, միթէ հրնարաւոր է բոլոր ուժերը ժողովել յալթական հակառակորդի մը գէմ կորովի դիմագրութիւն մը ցոյց տալու համար»

«Ինչ գուք լսելիք, ինչպէս ամեն օր ես կը լսեմ. հետեւեալ նախագատութիւնները, արտայայտող շատ ցաւալի շեշտով մը, — կը բաւէ որ պատերազմը գեռվեց ամիս ալ շարունակուի, յեղձութիւնները պիտի պայթի Ռուսիոյ մէջ»:

«Կամ թէ, ինչո՞ւ ճարտարները չեն յարձակիրու կամ թէ. «անհրաժեշտ է Մուկաթէի պտտութեան պէս պարտութիւն մը, ու եթէ տեսնէիք ինչպէս ես տեսայ թէ ինչպէս աչքերը ուրախութեամբ կը փայլին Յուշիմայի պարտութեան լուրին վրայ, իսկոյն պիտի ըմբռնէք որ պատերազմը անկարելի է, և որչափ որ երկար տեւէ այնքան աւելի սարսափելի պարտութիւններ իրարու պիտի յաջորդեն»:

«Անամօթ գաւաճաններ» պիտի ըսեն մէկ քանիները, ի թիւս որոց և զինուորականները, որոնք միայն մէկ նպատակի կը հետապնդեն՝ թշնամի յաղթելուն: Բայց հոն ուր լինդրին կը նայուի երկրի ապագայ բարօրութեան և քաղաքակրթութեան յաղթանակի բարձր տեսակէտով, իրօք կրնանք մեզագրել այդ մարդիկը:

«Պատերազմը բացաւ Ռուսիոյ ինքնակալութեան վէրքերը. ան պարզեց թէ ինչպէս ինքնակալութիւնը ընկերական ամենաստրագալի ախտերով վարակած է ժողովուրդը: Յաղթակաւն պատերազմը մը այդ կացութիւնը պիտի արտաբերէր արտաբերէր յիսուն տարեկանը մը. ինչպէս որ թուրքեան տարեկանը մը 25 տարով ամրապնդեց Սիւլէքսաւտարութիւնը: Ընդհակառակը, պատերազմի անյաջողութիւնները, ուրու պատճառները չը պէտք է փնտրելու, այլ վարչական թուրքի անհաշտութեան մէջ, որը կը խեղդէր գաստիարակչական ամեն մէկ փորձ, այդ անյաջողութիւնները գոնէ յիսուն տարիով պիտի արագացնեն ուսական ազատութիւնը»:

«Գաւաճեցէք ինչպէս կուզէք ուս ազատամիտները, բայց յարգեցէք անոնց մաքրութիւնը, ազնուութիւնը և վեհագոյն գրգռապատճառները»

«Ինչ որ ալ ըլլայ, կը կրկնեմ արտաքին կուրը անկարելի է շարունակել այն պարագային, երբ ոչ պակաս սարսափելի կուր մը կը մղուի երկրին ներքը: Դուք գիտէք այս փաստերը, պահեստի զինուորները կը խուսափին պաշտօնի ներկայանալու, սպաները պարտաւորված են սպաննել զինուորները, որոնք կը հրաժարին վագոն նստիլ Մ. Արեւելք երթալու համար: Անզգայութիւնը, ընդհանուր անտարբերութիւնը, անկարգապահութիւնը զինուորներուն մէջ և պաշտօնը կատարելու գեղամակութիւնը կը թագաւորեն»:

«Ամեն օր ատոնց փաստերը կը տեսնամ, ամեն օր խօսակցութիւն կուենեմ սպաներու հետ»

«Այս օրը զիս ինչ որ մեղաւոր լինէիք, բայց զուք երեխայ չէք, այդ ինչ է, Գոնէ բնատարկած միջոցին դիմադրելիք, վիճելիք. զու գը նացել ես թողով կապվածի պէս ուր որ հրամայել են. պակաս է մնացել որ ականջիցդ բռնելով չէ տարել նուկուդ»

«Աս Սիւլէքսաւտար վայելտիւնիչ, — եւ ինչով Արիւսան այդպիսի սարսափ է տարածել ձեր վրա. այդպէս նա ձեզ եւ ձեծել կուզէ. դրան էլ ուրեմն կը ենթարկվէք»

«Սֆանասիչը ծուռ ծուռ նայեց ինձ, ասելով. — Ամբողջ օրը զոգում էի այդ բանից»

«Ինչից, որ Արիւսան ձեզ կը ծեծէ»

«Այո»

«Չը...»

«Ես աչքերս միեցի ձերուկի վրա մեծ հետաքրքրութեամբ, դրանից աւելի ստորնացածի ես չէի հոնդիպել: Արիւսայի անունը տալուց անգամ նա սարսափում, կծկվում էր եւ ցնցվում»

(Շարունակելի)

վերջը վրկատորիս ինձ պարզեց որ քնած է եղել եւ դուրը բախելս չէ լսել խորունկ քնից: Մնաց գործել ինքնուրոյն կերպով. բայց սառցատանը մտնելով, ես նկատեցի որ դուրը այնքան ամուր կերպով է զոցված, որ դուրս թէ իմ ձեռնարկը յաղողվէր:

Ականջս դնելով նկուղի օթանցքին, լսեցի որ այնտեղ մէկը շարժվում եւ շնչում է:

— Ի վան Աֆանասիչ, այդ գուք է՞ք, գոչեցի ես ծակի միջոցով:

Նա վախցած մկան պէս քարացաւ եւ մի քանի վայրկեան ոչինչ չը պատասխանեց. վերջը անվճռողական եւ վախկոտ կերպով ձայն տուց:

— Դուք է՞ք. Ալէքսանդր վալէնտինիչ:

— Ես ինքս:

— Ի՞նչ էք հրամայում:

— Այնչիչ, եկայ ձեզ դուրս հանելու, բայց բանալի չը կայ: Կողպելը կոտրել չեմ կարող:

Նա աւարկեց:

— Միթէ Արիւսան արտօնե՞ց, որ ես դուրս գամ:

— Ինչ պէտք է նրա արտօնումը: — Օ՛հ, ասեց նա. դառն հիասթափումով. ուրեմն զուք այդպէս, ձեր

կողմից. ոչ, աւելի լաւ է թողէք, շատ շնորհակալ եմ ձեզից. բայց թողէք:

— Տարօրինակ մարդ էք գուք, ինչ զարճութիւն կայ այդ տեղ մկներէ հետ միասին սառչել:

— Իհարկէ ինչ բաւականութիւն կարող է լինել այս տեղ. ոչ մի բայց եթէ ես նրանց հրամանը ոտքի տակ տամ, ինձ հատար աւելի վատ կը լինի: Որովհետեւ Արիւսան իմ գէմ շատ-շատ բարկացած է:

— Է՛հ ուրեմն ես ձեզ ազատ կը թողնեմ եւ գնացէք ձեր ուզած տեղը:

— Ինչպէ կարիւր է. ի՞նչ էք ասում, ո՞ւր գնամ:

Նրա ձայնում անկեղծ վախ եւ լաց էր լսվում:

— Տարօրինակ է:

Այո, այ հիմա ձեր խօսիլն էլ ինձ զեռ կը նկատեն:

— Է՛հ, ի՞նչ կայ որ:

Աֆանասիչը մի քիչ լուեց եւ դառն վշտով լի ծվծվաց:

— Ինձ վրա կը բարկանան ձեր այդ հետաքրքրութեան պատճառով: Ձէ, աւելի լաւ է թողէք ինձ. Աստուած ողորմած է, ես կը նստեմ...»

Ես հետացայ բոլորովին շարած:

Առաւօտեան կանուխ, ես զարթեցի դրան թիթեւ բախումից:

— Ներս եկէք:

Եկողը Աֆանասիչն էր:

— Ահ, բանտարկեալ, է՛հ, դուրս թողի՞ն:

— Ներկայանում եմ իմ երախտագիտութիւնը յայտնել ձեզ, գեռ երէկ գրեցի ազատեցին: Ես սարսափելով որ ձեր ցանկութեամբ է, Շատ շնորհակալ եմ ձեզից եւ շատ յուզված:

Նա շատ դեղնած, լուրջ եւ հանդուրժելու չափ կարգին էր, որով հետեւ արքած չէր:

— Է՛հ, շնորհաւորում եմ, բայց դուք զարմալի մարդ էք:

— Ի՞նչ է, մեղմութեամբ հարցրեց Աֆանասիչը:

Ինչպէ՞ս մարդ կարող է թոյլ տալ որ իրեն հետ այդպէս վարվեն եւ այն էլ ո՞ւմ: Օտար մի կին ձեզ հետ վարվում է ինչպէս փայտէ մարդի հետ, ինչպէս փայտի հետ, ձեզնով մաքրում է նկուղի աղտերը եւ գուք թոյլ էք տալիս, լաւեմ էք. այդ ինչ վրա կրտսութիւն է. դուք գոնէ մի քիչ պատաւանդութիւն չունէ՞ք:

— Ես շատ մեղաւոր եմ, ասաց նա ստրկած հաստատակամութեամբ. եւ

որոնք կը զանգատին որ ոչ մէկ իշխանութիւն ունին իրենց զինուորներուն վրա, ամեն օր խռովութիւններ տեղի կունենան զօրքերուն մէջ, օր օրի վրա կը տարածուի անհնազանդութեան ոգին ընդդէմ ամէն մէկ իշխանութեան. որը և կը բնորոշէ «յեզափոխական շրջանները»: Եւ ամենէն ծանր կացութիւնը այն է որ կառավարութիւնը փոխանակ զօրքերը ճարտարներուն դէմ զրկելու, զայն տունը կը պահէ գործաւորները զսպելու համար:

«25 զօրքաւորներէն, կով կասեանը եւ թուրքստանինը միասին առնելով, միայն երեքը զրկուած են Մանչուրիա. միւսները. թէեւ ամենալաւ զօրքերը մնացին երկրին ներքին խռովութիւնները ճնշելու համար: Ռուս գործարաններու մէջ պատրաստուած փամփուշտներուն մեծ մասը ուս կու ծքերու մէջ խրուեցան: Այս ճարտասանական զարձուածք մը չէ. եթէ ներքին խռովութիւններու զոհերուն բոլոր թիւերը գումարենք. ատոնց վրայ դնելով մեծ քանակութեամբ ամեն օր սպանուող ստիկաններու և զինուորներու, արդիւնք ժողովրդային վրէժխնդրութեան. մենք պիտի գտնանք թիւ մը որ պակաս չը պիտի ըլլայ մեծ ճակատամարտի մը մէջ ինկածներու թիւէն: Այս, կը կրկնեմ ներքին կացութիւնն է գլխաւոր պատճառը զուտ հաշտութեան: Ստակ, ամենայն դէպս, երբ չի մտածուիր թէ երկրը տնտեսականապէս կը քայքայուի, պիտի գտնան, որոշ պայմաններով, Մարդիկ ալ, Ռուսիան կըրնայ երկար տարիներ զանոնք նետել պատերազմի անյազ Աստըծուն գիրկը, բայց առանց ներքին խռովութեան պատերազմը շարունակել անկարելի է:

«Պէտք է նկատել որ կացութիւնը շատ ծանր է և ուս պիտրօքրասին ոչ միայն պատմութիւնէն դաս չէ առած, բայց և անկէ որ իր աչքին առջեւ կը կը գտնուի: Խուլ հանդէպ խնդրանքներու և սպառնալիքներու կոյր հանդէպ վտանգներու, ան առաջ կերթալ հին ճամբայով. անդրդուելիօրէն. կարծես ամբողջ աշխարհը և Ռուսիան իրեն համար ստեղծուած ըլլան և ոչ ինք Ռուսիոյ:

«Միտքերէն վերջը, Պուլիկինի գալովը, ձեռնոցը նորէն նետուած է և պիտրօքրասին, ուշքի գալէն վերջը, վերսկսեց Բլէվէի սէժիմը, կարծես թէ բան մը պատահած չըլլար:

«Թերթերը կը դադարեցնուին, հաւաքումները կարգիլուին, մարդիկ կը ձերբակալուին, կը դատապարտուին, իսկ պիւլօքրասին կը շարունակէ մարտն առնելու մէջ որ աշխարհի զարմացքը կը շարժէ: «Բայց եթէ Բլէվէի ատեն այդ խաղը վտանգաւոր էր, ժամանակի ընթացքին շատ գէշ պիտի վերջանայ, նկատի առնելով պատերազմին անյաջողութիւնները, ներքին անցքերը և բարենորոգումներուն խոստումները:

«Դեռ մոտերս շատերը յոյս ունենին որ կացութիւնն պիտի ելլան խաղաղ բարելւումով, սակայն հիմայ ամենքն ալ կը զգան որ միայն յեղափոխութիւնը ընդունակ է մաքրելու հին ախտերը և ստեղծել նոր ուժեր մը բոլորովին նոր մարդիկներու պեկավարութեամբ:

«Յեզափոխութեան գալով, ինչպէս ըսած եմ շատ անգամ, անկարելի է որ յեղափոխութիւնը ընդգրկէ ամբողջ ժողովուրդը մը հին շինութիւնը քանդելու և նորը շինելու համար: Զէ. այստեղ ժողովրդային զանգուածը դեռ պատրաստ չէ և ոչ լուսուորուած: Դարեւոր ստրկութեան արձանները դեռ շատ խորն են, միջին դասակարգը տնտեսապէս շատ քիչ բարձրացած է, հին հասարակագիտութիւններու յիշատակները շատ թոյլ են ժողովրդին մէջ: Եւ վերջապէս ուսին նկարագրելու շատ թոյլ է և անզօր ընդգրկմադրական ընդունակութիւնը:

«Զէ այստեղ Ֆրանսական յեղափոխութեան տեսակի յեղափոխութիւն անկարելի է, նոյնիսկ կանխաձայն, բայց Լատին, Իվան Վոզնեսենսքի, Իեթերսպուրկի, Մուկուայի և ուրիշ հազարաւոր տեղերու ողբերգութիւնները պիտի իրենց անընդհատ կրկնումները առաջ բերեն, ընկերային այդ ջղաձգումները ատիճանաբար պիտի կրկնուին կտրելու նետելու համար ուս պիտրօքրասի, այդ հինցած օրկանիւմի անդամները, որը անխելքօրէն կը մտածէ թէ պիտի կարենա՞յ կասեցնել ժողովրդի մը պատմական (ճակատագրական) յառաջագործութիւնը:

«Եւ քանի այս խռովութիւնները շարունակուին, քանի ուս ժողովրդին մէկ մասը ինքզինքը աւելի ճարտարներուն մօտիկ զգայ, քան իր արեւակից եղբայրներուն, պատերազմը անկարելի է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Վերջին լուրերու համեմատ ամբողջ Եւրոպայի արդէն գրաւուած է արարներու կողմէն: Յիշելի փաշայի ձեռքը մնացել է միայն Հոտէտէան, ուր օգնութիւն կը սպասէ:

— Կը հաւաստիացնեն թէ անգլիական կառավարութիւնը նորէն ծարտանէլի ազատ մտաքին խրդիրը պիտի բարձրացնէ:

— Պուլկար կառավարութիւնը պետութեանց քով գտնուող իր ներկայացուցիչներուն շրջապահական մը զրկելու է բողոքող էտիրնէի նահանգին պուլկար բընակչութեան անտանելի կացութեան մասին:

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Մոսկուայի քաղաքապետ կոմս Եուվալովի սպանութիւնը քաղաքական է:

— Ուրիշ նշանակուած է լիազօր ճարտի հետ հաշտութեան բանակցութիւններու համար: Այդ նշանակումը Բարիկեան և Իեթերսպուրկեան շրջանակներու մէջ լաւ սպասուողութիւն գործած է:

— Իեթերսպուրկէն եւրոպական թերթի մը կը հաղորդեն որ ժէնէրալ Եթուէլ ձերբակալուած է, որովհետեւ շատ մը կասկածներ յարուցուել են Բորի Սթիվուրի յանձնման առթիւ:

— Կատերենայ երկրորդ պատերազմական նաւին ըմբոստացման լուրը պաշտօնայէս կը հերքուի:

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

Սէուլի մէջ, Քորէացիներու կողմէ ճարտական իշխանութեանց դէմ դաւադրութիւն մը բացուել է. դաւադրութեան պարագլուներուն մէջ կան Քորէական նախկին նախարարներ և բարձր պաշտօնեաներ: Քորէայի գրաւումէն ետքը այս Երգ. դաւադրութիւնն է:

— Վլատիվոսթօքի մօտ, Վլատիմիրովսկա գիւղին քով ուս և ճարտն զօրքի միջեւ ընդհարում տեղի ունեցել է: Պատերազմէն հարեւոր լուրեր չըկան:

Տիար՝

Հաճեցէք ներկայս հրատարակել Ձեր ազգուրա լրագրոյ մէջ, որուն համար կանխաւ շնորհակալութիւններս:

Իգիմաց Աղբ. ընկ. Գործ. ժողովոյ Ատենադպիր Ատենապետ Թ. ԱՋԱՊԼՍՐ Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Ր Ի Ա

Աղբ. ընկ. Գործ. ժողովս կուզայ հրատարակու յայտարարել ի գիտութիւն պատուարժան բաժնորդաց թէ, իր միամեայ տարեշրջանը լրացած ըլլալով, յառաջիկայ կիրակէ, յուլիս 40, ցերեկէ վերջ ժամը 2 ին Ընդհ. ժողով պիտի գումարուի Աղբ. վար-

ժարանին մէջ, եւ թախանձանք կը խնդրուի պատուարժան անդամներէ որ առանց բացառութեան հաճին ներկայ գտնուիլ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ն Է .

1.— Համարատուութիւն Գործ. ժողովոյ, 2.— Ընտրութիւն նոր Գործ. ժողովոյ:

Լ Ո Յ Ս Ե Ս Ա Ի
Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն
«ՈՒՐ Ե Լ Ե Լ Ե Ա Ն Խ Ն Գ Ր Ո Յ»
Ե
Ա Ռ Ա Ջ Ն Ո Ր Գ
Հ ա յ կ ա կ ա ն հ ա ր ց ի

676 էջերէ բաղկացեալ այս գործը Արեւելեան և Հայկական խնդրոց ամփոփ մէկ պատմութիւնը կուտայ. կը պարունակէ շատ մը Հայերու համար շահեկան պաշտօնաթղթեր, միջազգային դաշինքներու մէջ անցած հայոց նպատաւոր յօդուածներ, եւ 1895 ին հայկական վեց դաւառներու համար եղած Բարեկարգութեանց Մրրազգրքը:

Այս կարեւոր նիւթը դերահասակը նախ ոճով եւ պարզ կերպով Հայ հասարակութեան ներկայացնել եղած է հեղինակին ջանքը եւ նպատակը: Գործը բաժնուած է 2 հատորներու, որոնք թէեւ թղթակազմ, բայց հաստատուն կարուած ըլլալով դիմացկուն են եւ կրկին կազմելու պէտք չունին: Երկու հատորները կրնան գատալ ստացուիլ իւրաքանչիւրը 1 ու կէս շիլինգ. երկուքն ի միասին կազմուած ալ 3 շիլինգ:

Փոսթին ծախքը գնողին վրայ կողքին երկու կողմը դրուած են իզմիրեան Ս. Պատրիարքին եւ հեղինակին պատկերները:
Դիմել ուղղակի հեղինակին.
ԲՐՈՅ. Կ. ԹՈՒՄԱՅԵԱՆ
Զիկուիլ Լօնտօն.

Ա Ջ Գ

Ռուսներոյ ձեռքան քաղաքի Հայոց եկեղեցւոյն համար պէտք է ուսեալ, բարեկիրթ եւ իւր նուիրական կոչումն լաւ ճանաչող քահանայ մը նոյնպէս միեւնոյն բարեմասնութիւնօք օժտեալ երաժիշտ մը՝ քաղցրանուազ ձայնիւ:

Փախաքողներն զիմեն գրաւոր եւ որոշ տեղեկութեամբ ու միանգամայն ազգային պաշտօնական վկայութեամբ առ

Կ Վ Ա Ռ
Ը Ա Ո
Ռ

Վառնա, կեղծողն փողոցի մը մէջ մէկ ու կէս յարկով քարաշէն հաստատուն մը շինուած 95 քառակուսի մէթր տարածութեան վրայ, 245 ք. մէթր պարագ հողով, Ունի 5 սենեակ, մէկ խոհանոց, լուսարան, հոր եւ ամեն ինչ որ անհրաժեշտ են ընտանիքի մը հանգստութեանը համար:

Փախաքողը կրնան զիմել «Շարժումի խմբագրութեանը»: